

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPÉDIE (مجموعه علوم)

ԽՐԱԳՐԱԳԵՏ

Ղ. ԲՈՒԼՍ

ՏԵՕՐԷՆ

Վ. Գ. ՉԱՐԿԱՐՅԱՆ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

1898 ՄԱՅԻՍ 16

Ամեն ճեղի համար Տարեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 15 դահ: Օտար երկրաց համար Տարեկան կանխիկ 15 Գրանք: Թղթասարի ծախք խմբագրութեան կը վերաբերի: Հասք 40 փարայ: Գաւառներէ բօսքի բալ ող կ'ընդունուի 100 դրուցի ճեղ 105 դրուց:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. — Ստուգաբանական բառարան 2.:
Ն. ԹՕԳԱԹԼԵԱՆ. — Ժողովրդական իրաւարանութիւն:
Ղ. ԲՈՒԼՍ. — Շերամաբուժութիւնը — Բասթէօնեան գրութիւնով:
ԱՐԱՔՍ. — Առսնին տնտեսականը. — Ընդհանրութիւնը:
Ղ. ԲՈՒԼՍ. — Պարտիզայանական. — Պատուաւոր:
Ղ. ԲՈՒԼՍ. — Առսնին կենդանաբանութիւն. — Ցեղ եւ նմանները:
Ղ. ԲՈՒԼՍ. — Դաշտային կենդանաբանութիւն. — Դորտ:
Մահազոյժ. — Անտոն էֆ. Ազարեան:
Թղթակցութիւնը. — Նուէր:
Ջրօսանք. — Հանեղուկ թիւ 3:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԻԿՈԼՈՅԵԱՆ

Կ. Պոլիս Չախմաքիլար եօզուշու Ջիւնայիլի հասն թիւ 28

WIEN 1898
BESTELLT
1.6.98
10-11V

ՉՐՕՍԱՆՔ

Լուծում բիւ Խ Հանելուկի

Թաշ-կին-ակ

Չոր լուծեցին Տեարք 1. Հայրապետ Մանուկեան, 2. Յ. Շէլէֆեան, 3. Գարդալցի, 4. Յակոբ Արայճեան, 5. Մ. Համբարձումեան, Իշխան, 6. Աբրահամ Կ. Կառւճեան, 7. Կարապետ Մատթէոսեան, 8. Գր. Բակլաճեան, 9. Յակոբ Չափեան, 10. Յակոբ Նիշտէլեան:

★ ★

Լուծում Թ. 22 Հանելուկի

Պատ-առ

Սոփի ատեն կը փնտռես պարս
Առաջին մասն է պարս,
Երկրորդ մասը բայ մ'է պարս,
Վերջի երեք գիրը պարս
Փայտ սհարին ձեռքի գործերն է պարս:

Չոր լուծեցին Տեարք 1. Յ. Շէլէֆեան, 2. Յակոբ Տէր Յակոբեան, 3. Իշխան Յակոբ Չափեան, 4. Ե. Յ. Էթմէքճեան, 5. Ա. Նալպանտեան, 6. Մամաս, 7. Ա. Գալալէն Ա. Կէնճեան, 8. Բարսեղ Ն. Շահպաղ և Լեւոն Տէր-Ներսէսեան:

Առաջին լուծողին նուէրը որ է Եռամսեայ Հանրագիտակ, Շէլէֆեան էֆէնտիի տրամադրութեան տակ կը դնենք:

★ ★

Ստորեւ կը հրատարակենք Պ. Բարսեղ Ն. Շահպաղի սիրուն ոտանաւոր լուծումը:

Պատառն եմ հացի կըր, Ինձ պէտք ունին մարդիկ բոլոր. Առջի մասս թէ որ զատես. Բարձր պարս մ'եմ գիտ կը տեսնես. Իսկ երկրորդս թէ որ ուզես. Առ լուծումը կըսեմ քեզ ես. Վերջին երեք գրերը, պարս, Առ ու կազմէ բառեր հազար, Փայտահարի գործի պարս, Կը դարձնես կըլլայ պատառ:

★ ★

ՀԱՆԵԼՈՒԿ ԹԻԻ 3

Կարծեցի թէ զիս հանգչեցուցին,
Յանկարծ ապտակ մը իջեցուցին,
Ուր տեղէն մեկնիլս ես իմացայ,
Իսկոյն մութ տեղի մէջ նետուեցայ:

Երեց ու կրտսեր եղբայրներին,
Խաւար տեղի մէջ հանդիպեցայ,
Սրտապինդ տնոնց խառնուեցայ,
Հեռաւոր վայրեր մեզի տարին:

Միջոց եկաւ. երբ լոյս տեսանք,
Աղանձի պէս թուշտեցանք:
Մեր վերայ շատ կան գուրգուրացող,
Աւաղ, սմանք ալ՝ յոյժ անարգող:

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐԱՅԵԱՆ

Սոյն հանելուկին հեղինակը կը խօստանայ առաջին անգամ լուծողին և միանգամայն բացատրողին ամենագեղեցիկ նուէր մը:
Լուծումները մինչեւ հինգշաբթի օր:



ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ՊԱՐՍԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԵՄԻՆԶԷ

Կ. Պոլիս Գնահիտան խանի սակ թիւ 3

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամէն տեսակ թարմ գեղորայք. վերաբուժական գործիքներ, Անգլիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեաքներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Ասլանեան և Ս. Էմինզէ Լնկերութիւնը երկարատեն անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Չարաճճի մուկներու և լուերու եւլն. համար միջատասողան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած ենք ուղղակի Տալմացիայէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք յարգոյ հասարակութեան:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ



Գրական եւ Գիտական

Encyclopedie

{مجموعه علوم}

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

1898 ՄԱՅԻՍ 16

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ



Տ. ՅՈՎՀ. Ա. ՔՀՆ. ՀԻՒՆԲԵՍՐՊԵՅԵՆՏԵԱՆ

2.

(Շար. տես թիւ 4, 5, 6, 7, 9 եւ վերջ)

Օրագիրները կը փնտռեն ածական-
թիւն, որպէս զի օրը օրին կշտացնեն ի-
րենց բազմադրազ ընթերցողներու ան-
ցողակի հետաքրքրութիւնը, ապա՛ զուրկ
են բանասիրական հանդամանքէ։

Հանդէսները ո՛ր շարաթը անգամ մը
կը հրատարակուին, պաշտօն ունին նիւ-
թի մը բազմակողմանի ուսումնասիրու-
թեամբ՝ տեւական ծառայութիւն մա-
տուցանել իրենց ընթերցողներուն։

Աւստի բանասիրական գրութիւն մը՝
օրագրի մը մէջ բռնած սխալներէն ա-
ւելի ընդարձակ տեղ կը գրաւէ հանգի-
սի մը մէջ. բայց որչա՞փ կարելի է մեզ
դանդաղել գրքի մը քննութեամբ որուն
բոլոր շահեկանութիւնը քննադատեալ
երկասիրութենէն աւելի նոյն երկասի-
րութեան առարկան է։

Մեզ համար արդէն իսկ գիտական
աւելի կարեւոր է քան թէ այս Սարգիս

Բանալան Բարաւը. ուստի կը փութանք
փակել մեր քննադատութեանց շարքը,
մեր խոստման համեմատ ամբողջացնելով
մեր մասնանիշ բրած սխալներուն մնա-
ցորդը։

ԸՍԻՆՔ ԹԻ ՀԻՆՔԵԱՐԱԿԵՂԵՆՏԵԱՆ Բ-
արաւ կ'ընդունի։ Բարաւը Մանուկի մէջ՝
Հրատարակիչ Պէրպէրեան բառախաղ
ընդունած էր, թերեւս, ինչու որ աղաք
զուարթացնելու աւելի անմեղ զրօսանք
չի կայ։ Բայց խնդիրը կը փոխուի՝ երբ
կարգը կուգայ բառերուն ծագումը բա-
ցատրելու դժուարին դիտութեան։ Ստու-
գարանութիւնը լուրջ դիտութիւն մըն
է, պէտք է վստահ ի սպառ նմանօրի-
նակ մանկական զրօսանքներ՝ ապա թէ
ոչ ստուգարանութիւն ըլլալէ կը դադ-
րի։ Մարգէհաղի աչքերուն կը հաւտայ.
Իրաւ Հինքեարակեղենտեան այդ օրինակ
անտեղի միջոցի մը դիմած է բառերուն
ծագումը բացատրելու, հետաքրքիրնե-
րը կրնան բուն իսկ գիրքին մէջ բազմու-
թեամբ գտնուի. անոնցմէ մենք միայն
հետեւեալները կը յիշենք։

Օրինակ. էջ 260. — Հին ծագի ի Յն. աստ,
որ նշ. գինի եւ Յն. աստ, որ նշ.
նոր, սահմանեալ է նշանակել մեզ
Գինի, Արար. Խաբ, նշ. գինի,
յորմէ՝ Խաբ, (գինի)։ Այս բառա-

ըութեան փորձերուն անձամբ հսկեց :

Ի՞նչ մեծ եղաւ ամենուն յուսախա-
բութիւնը՝ երբ ամեն մարդ ապշութեամբ
կարդաց թէ՛ այս զարմանալի գրքին մէջ՝
որոնք ինքե՛ր գիշերք + «Կառնաւն» արկնաբ, ձե-
ռողն ձեռնօ կ'իլլեն, ամենայն դիւրու-
թեամբ: Ստուգարանութեան վրայ շատ
տիւր գաղափար մը կազմեց հասարա-
կութիւնը, և թերեւս Ստուգարանա-
կան բառարանին հետ դատապարտեց
ստուգարանութեան գիտութիւնն այս:

Բանասիրութիւնն ալ կը դատապարտէ այս գիրքը, և աւելի վատահունթեամբ կ'սպասէ անոնց Ստուգաբանութիւնն՝ որ նուազ յաւակնութիւն ունին:

ՄԻԶՐԱՆ ՅՈՎԷԶԱՆՆԷՍԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱԽԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Կը պատահի շատ ատեն որ երբ պարտա-
քրդ պահաջաւորիդ վճարես, այս վեր-
ջինը իր առածը ուրանալով դարձեալ
առնելիքը պահանջէ։ Այդ տեսակ ան-
ուղղամիտներ, ամեն օր, հրապարակի
վրայ կը տեսնուին։

Դատարանը՝ որուն կը գիմէ և ուր գու
ալ կը կանչուիս պարտաք- վճարած ըլ-
լալդ ապացույտներու համար, կը դա-
տապարտէ դքեզ կրկին անդամ տալու
պահանջատէրիդ այն դրամը զոր տուած
ես. քնչու՛, գիտես. որովհետեւ պարտ-
քըդ վճարած պահուդ, պահանջատե-
րէդ, իր պահանջը առած ըլլալուն
թուղթ մը ստացած չես:

Այդ տեսակ թուղթի մը Իդրուս Բեկ
կ'ըսեն, Իսլամն քանի մը տեսակներու կը
բաժնուի.

1. Իդրան իստեմնի. -- Եթէ մէկը ուրիշի մը վրայ ունեցած իրաւունքին ամբողջութիւնը կամ մէկ մասը իրեն շնորհած ըլլալը յայտարարէ, իդրան իստեմնով պարտաւորը ամբողջովին կամ մասամբ

պարաքէն ազատած կամ տարրեր յա-
ցաստութեամբ իւր ըրած կ'ըլլայ. Օրի-
նակի համար. Յակոբ Ղուկասէ 4800 զը-
րուշ կը պահանջէ, այս վերջնոյն կողմէ
ստորագրուած պարզ մուրհակով մը.
Եթէ Յակոբ այդ 4800 զրուշի գումարը
Ղուկասի շնորհէ, իւր ըրած կ'ըլլայ ըզ-
Ղուկաս:

2. Իդր-ի էմիֆ-ի. — Եթէ մէկը ուրիշի մը վրայ ունեցած առնելիքը առած ըլլալը յայտարարէ, այն աստիճանիդ է, որ Էմիֆ-իդ իդր-ը չի կրնայ:

Օրինակի համար՝ Յովսէփ Խաչիկէ ոսկի
 ժամանցոյց մը կը գնէ, և գնելէն քանի
 մը օր վերջ արժէքը կը վճարէ: Եթէ Խա-
 չիկ ժամանցոյցին արժէքը ստացած ըլ-
 լալը և Յովսէփէ այլեւս ժամանցոյցին ար-
 ժէքին վերաբերեալ ունէ բան մը չպա-
 հանջելը ապացուցանող թուղթ մը տայ,
 իդրա՛ն ինքէ՛ք որած կրոյալ գծովսէփ:

3. Իդրախի խառն. — Միմիայն մէկ խըն-
դիրէ մը իդրա ընեւն է: Օրն. Միեւնոյն
անձը ուրիշի մը հետ երաշխաւորու-
թեան, ժառանգութեան, առնելիքի
եւայլն խնդիրներ կրնայ ունենալ, և
այդ խնդիրներէն միոյն համար իդրա խ-
ռնի տալ, Ենթադրենք թէ ժառանգու-
թեան համար տուած ըլլայ: Տուած այդ
սէնէտը իդրա խառն կըլլայ, և ալ ժառան-
գութեան վերաբերեալ ուրիշ խնդիր չը
կրնար յարուցանի:

4. Իդրոէ ասի. — Առանց բացառութեան ամեն տեսակ դատէ մէկը իդրնելն է. ըլլայ առնելիքի, ժտանգութեան, երաշխաւորութեան հէշէնէ, վէշէնէի եւայլն դատեր:

Այս չորս տեսակ խոհանոցը ընդունելի
կը նկատուին, երբ.

Ա. Իսկա ընդլը անչափահաս (սուրբ),
խելադար (սուրբ), զառամեալ (սուրբ)
չէ :

Բ. Իդրև Լզող անձինք որոշեալ և ծա-
նօթ են. հետեւաբար «ամբողջ պարտա-
տէքնեհա Իդրև ըրի», և կամ «մէկու մը

վրայ առնելիք չունիմ» ըսելի խոսքն ընել ըսել չէ։

Գ. Խաչատուրի խնդիր չըլլայ։ Օրինակի համար՝ մէկը ապրանք մը կը ծախէ և փոխարէնը առնելէ և զգնողը խոսքն «...» խոսքն ընելէ, և փոխարէնը գնողը զծախողը ապրանքին փոխարէն տուած գումարին վերաբերեալ ամեն տեսակ դատէ խոսքն ընելէ վերջ, հակառակ փոխարէն տուած «...» խոսքն, ապրանքը ուրիշին ըլլալը ապացուցուի, և տէրը զայն ետ առնէ, խոսքն չեղեալ կը նկատուի, և զգնողը տուած գումարը ծախողէն ետ կըրնայ առնել։

Գ. Խոսքն ընողը, մահամերձ վիճակին մէջ, իր ժառանգորդներէն մին պարտքէն խոսքն չընէր. սակայն մահամերձ վիճակի մէջ եղող մէկը կրնայ իր ժառանգորդներէն չեղողները խոսքն ընել, պայմանաւ որ խոսքն ըրած գումարը Բեքէթին մէջ երրորդէն աւելի չըլլայ։

Վերոյիշեալ պայմաններու մէջ խոսքն մը առնուելէ վերջ։

1. Խոսքն տուողը նորէն բան չը կրնար պահանջել խոսքն առնողէն։

2. Խոսքին թուականէն առաջի իրաւունքը անգոյ կը նկատուի, սակայն խոսքի թուականէն վերջի իրաւունքը կրնայ պահանջել։ Օրինակի համար՝ եթէ մէկը տունի մը վարձագինին վերաբերեալ դատին համար, ուրիշի մը խոսքն «...» տայ և խոսքի թուականէն վերջ նոյն անձին փոխ տուած գումարի մը համար դատ բանայ, այդ դատը լսելի կըլլայ, այսինքն թէ դատարանը «...» կայ» ըսելով դատախազին դատը չը մերժեր։

Խոսքն 5000 դրոշմ պակաս խնդիրներու համար վկաներով կրնայ ապացուցուիլ, իսկ 5000 դրոշմէ աւելի եղածներուն համար անպատճառ խոսքն «...» խոսքն խմբագրուելու է. որովհետեւ 5000 դրոշմէ աւելի եղած դատերը արդէն «...» խոսքով կրնան պահանջուիլ, և «...» մը միմիայն ուրիշ «...» խոսքով չը զօրութիւնը

կրնայ կորոնցնել, այսինքն չեղեալ նկատուի։

Խոսքն «...» խոսքն ամեն մէկուն 20 փարանոց հաշիւով կը փակցուի՝ ինչ որ ալ ըլլայ գումարն քանակութիւնը։

Այս նախնական այլ կարեւոր ծանօթութիւնները տալէ վերջ, օգտակար կը համարիմ, հոս խոսքն տուող նմոյշներ դնել, որով ոչ միայն դիւրութիւն այլ նաեւ խափադրութեան եղանակին համար վարձութիւնն ունեցած կ'ըլլան Հայաստանի Պատ. ընթերցողները։

(Շարունակելի)

Ն. ՅՕԳԱՔԵԱՆ

ՇԵՐԱՄԱԲՈՒՄՈՒԹԻՒՆԸ



ԲԱՍՄԱԲՈՒՄԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

(Շար. քնն. քիւ 10)

Բուժարաններու սեղաններուն վրայ փակուած համար կը պատրաստեն մասնաւորապէս խիստ հաստը, զօրաւոր և անհզր թուղթ մը, այսինքն՝ շատ երկայն ըլլալուն ինքնիք վրայ փաթտելով գլանի մը ձեւով կը ծախեն. ուրիշ շերամարոյժը իր բուժանոցներուն մեծութեամբ կտրելով կը գործածէ։ Այս թուղթը անուրանալի օգտակարութիւններ կ'ընծայէ որդերուն անկողինները փոխելու համար։ Մարդ մը՝ առանց ուրիշ օգնութեան պէտք ունենալու, մինչեւ իսկ տղայ մը կըրնայ մէկ բուժարանի թուղթը ինքն իր վրայ բոլորելով վերցնել և տանիլ այլուր։ Գործողութիւնը շատ շուտով և առանց փոշի հանելու կը կատարուի. ինչ որ նկատուելութեան առնելիք կարեւոր կետ մ'է, որովհետեւ հիւանդութեանց փոխանցումը կը կատարուի մանաւանդ փոշիներու միջոցով գլանաւոր, որոնք իրենց մէջը պարունակելով հիւանդութեանց սերմերը, տարեւներուն վրայ կ'իջնեն, և թրթուրները ուտելով կը վարակուին։

Բուժարանները մաքրելու համար ուրիշ ու

եւէ դրութիւն վտանգաւոր է հիւանդութեանց փոխանցման նկատմամբ, որովհետեւ որչափ նախազգուշութիւն ձեռք առնուի, կարելի չէ առանց փոշի հանելու կատարել, առանց հաշուելու դժուարութիւնները և յոգնութիւնները: Ամեն մէկ բուժարանի համար վերի վերոյ 23—30 փարայի թուղթի ծախք մը կայ, ուստի չ'արժէր այսպիսի ջնջին գումարի մը համար զրկուիլ անոր օգտակարութենէն: Այս թուղթին 1 քիւնն կը ծախուի մօտաւորապէս 2 զրուշի: Եւ մէկ բուժարանին համար ալ պէտք է 300—350 կրամ:

Այդ միեւնոյն թուղթը ծակծկուած պատրաստ կը ծախեն երկու տարբեր մեծութեամբ ծակերով: Առաջին տարիքներուն համար 1 հար. մեթր տրամագիծերով և մեծերուն համար 4 հար. մեթր. սր թղթակալներուն մեծութեամբ կը կտրեն և կը գործածեն ինչպէս ըսինք վերը: Այս ծակոտկէն թուղթին քիւնն ալ կը ծախուի 6—7 զրուշի, և մէկ բուժարանի համար ալ 250 կրամի ծանրութեամբ թուղթ կ'երթայ: Ըսել է իւրաքանչիւրին համար մօտաւորապէս 60 փարայի ծախք մը պիտի ունենաք. բայց եթէ ուզէք կրնաք այս ծախքը շատ թեթեւցնել, եթէ պարզ թուղթը ծախու առնէք միայն, և ծակերը դուք բանաք ձմեռ գիշերներ, որ զրօնեցուցիչ և օգտակար զրազում մը կրնայ ըլլալ ձեզ համար: Ուստի կ'առնէք նախ մուրճ (չէքիճ) մը, և երկու հատ ալ ակիր (զրմպա), որոնց մին 7 հազ. մեթր (միլի-մէթրօ) և միւսը 1½ հար. մեթր (սանթիմ) տրամագիծով ըլլայ: Այս ակիրները մանրափաճաւներու քով պատրաստ կրնաք գտնել վերի վերոյ հատը 4—5 զրուշի: Մէկ անգամուն կրնաք այդ ակիրներով մէկ պրակ (տէսթէ) թուղթ մէկէն ծակել: Թուղթերուն եզերքները 2 հար. մեթրի չափ լուսանցք մը ձգելու է, այսինքն ծակելու չէ, որպէս զի տեղափոխած ատեննիդ բռնելու տեղ ըլլայ: Թուղթը երբ Թօփով առնէք, անշուշտ աւելի ածան կ'ըլլայ, որուն քիւնն այն ատեն կրնաք մօտաւորապէս 50—60 փարայի առնել: Պօլոյ հրապարակը ծախուած այս հաստը թուղթը իր չափերով կը յարմարի թրթուրներու անկողիններուն պատրաստութեան: Երբ պրակ առ պրակ

ծակէք զանոնք վերը յիշուածին պէս, այն ատեն մէջտեղէն կը կտրէք, որ ճիշդ ձեր ուզած չափին կը հաւասարի, որոնց 12 հատը կը բաւէ 2½ մեթր երկայնութեամբ բուժարան մը ծածկելու, և կը կշռէ մօտաւորապէս 125—150 կրամ: Ըսել է այդ թուղթերուն երկու պրակը 1 քիւնի չափ կը կշռէ, և անով կրնաք ծածկել 4 բուժարաններ 50—60 փարայի պզտիկ ծախքով մը:

Բուժարաններու յատակը ծածկելու համար եթէ չի գտնաք երկայն թուղթ, և կամ եթէ սուղ ըլլայ անիկայ, կրնաք միւս թուղթէն ալ գործածել ծայր ընդ ծայրի սոսինձով իրար փակցնելով:

Այս ծակոտկէն և անծակ թուղթերը եթէ խնամով գործածուին, քանի մը տարիներ կը գիմանան, որ ամեն տարի շերամաբուծութեան սկզբնաւորութենէն առաջ պէտք է ապանելու, և որ իր կարգին պիտի գրենք:

Վերջապէս այս ծակոտկէն թուղթերու միջոցաւ կատարուած անկողնոյ փոփոխումը շերամաբուծերու համար այն աստիճան ակներեւ օգտակարութիւններ ունի որ, ջերմիւ կը յանձնարարենք իրենց անոնց գործածութիւնը: Որովհետեւ արդէն իրարու վրայ հաշուելով, իւրաքանչիւր տարուան ծախքը այնչափ չնչին է այս թուղթերուն, որ չ'արժէր իսկ հաշույ ենթարկել, ենթադրելով որ պէտք եղած խնամքը չի պիտի զանաք անոնց, և միջին հաշուով 4—5 տարի կրնան գիմանալ, և որ 23 կրամ (մէկ տուփ) հունտի համար, պէտք եղած բուժարաններուն (25 բուժարան) յատակը ծածկելու և որդերուն անկողինները փոխելու համար ալ մօտաւորապէս 15 քիւնի չափ թուղթի պէտք պիտի ունենաք, ըսել է իւրարու վրայ տարին առ առաւելն 5—6 զրուշի ծախք մը ըրած պիտի ըլլաք:

Ըսէք հիմա, ուրիշ դրութիւններէ աւելի ածան և աւելի աղէկ չ'ը: Խսիրները զոր օրինակ, իրենց թուղթկազմ հիւսկէններով և հիւսուածքին խորդուբորութիւններով հիւանդութեանց մանրէսերմերուն ընդարձակ ասպարէզ մը կը նուիրեն, և թղթերու չափ ալ դիւրագործածելի չեն:

Յոգակի բերքը աւելի առատ կ'ըլլայ թուղթի գործածութիւնով, և ձեռնաշխատութիւններուն վրայ ալ մեծ խնայութիւն մը

ըրած կ'ըլլաք: Թէ անկողնոյ փոփոխումը կը կատարուի առանց թրթուրներուն գպելու, և ոչ իսկ անոնց անոր տակնուվրայ ընկելու: Եւ այս գործողութիւնը կէս առ կէս պակաս ժամանակուան մէջ կը կատարուի թուղթերով քան ուրիշ գրութիւններով: Նկատողութեան առնելու մեծ առաւելութիւն մը մասնաւորապէս երկրագործներուն համար, երբ յիշենք սա առակը, թէ «ժամանակը ոսկի է»:

Վերջապէս հիւանդ որդերը աղբին վրայ կը մնան անկողնոյ փոփոխման ժամանակ, և այսպէսով փոխանցումը վտանգէն զերծ մնալով, բերքերնիւ պահպանուած կ'ըլլաք: Թուղթերու հակաանեխումն ալ դիւրիւն կերպով կը կատարուի:

Հիմա դառնանք բացատրելու երկրորդ չիջանի աշխատութիւնները:

Ինչպէս նախորդ բացատրութիւններէն տեսանք, անկողնոյ փոփոխման ժամանակ եւ թէ ալքերուն վրայ քնացած որդեր գըտնուին, կը նետեն վանոնք, և կամ եթէ գըտնուի մէջերնիւ, որոնցմէ կը յուսացուի աղէի բերք մ'ստանալ, զատ բուժարանի մը վրայ կը բուժեն վանոնք, տաքութեան աստիճանը աւելի բարձր բռնելով և մէկ քանի անգամ ալ աւելի կերակուր տալով, որպէս զի շուտով միւսներուն հասնին: Բայց երբեք անոնց խառնելու չէ:

Այս անկողնոյ փոփոխման ատեն պէտք է որդերը վերջնականապէս շերտմանոց փոխադրել, որ նախապէս 19⁰ հարիւր բարդ տաքացած ըլլալու է, և ուր պիտի մնան մինչեւ մշակութեան վերջը:

Անկողնոյ փոփոխման ժամանակ բուժարաններու վերի յարկի որդերը վար իջեցնելու է, վարիններն ալ վեր առնելու է, որպէս զի չարունակ հաւասարութիւնը պահուի անոնց մէջ: Երկրորդ սա կանոնը միտք պահելու է որ, մշակութեան ժամանակ որդերը նեղուելու չեն, և իրենց տեղը ընդարձակ ըլլալու է: Այս պատճառաւ անկողնոյ փոփոխման ժամանակ պէտք է սեղաններուն թիւը կրկնապատկել: Որով 1 տուփ (23 կուամ) հունտի համար պէտք պիտի ըլլայ 2 սեղան այս երկրորդ չիջանին մէջ:

(Շարունակելի)

Լ. ԲՈԼՍ

ԱՌՏՆԻՆ ԿԵՆԴՐԱՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Յեց (կիւվե) եւ նմանները

Ամառուան տօթագին գիշերներ պատուհանը բաց նստած էք, օդաչու այցելուներ են որ կուգան պատուել զձեզ, մետաքսափայլ երկաթ ստեղծներով վերջաւորած վայելչագարդ կրկնակ թեւերով, որոնց վերինները ընդհանրապէս նեղ քան վարինները, արտայայտիչ գոյներով երփնուած և զօդուած երկայն, նուրբ և գլանաձեւ մորմնոյ մը: Գիշերային կարգ մը թիթեռնիկներ են անոնք: Բայց ո՛չ, աւելի ծաղկներ են կարծես կեանք առած, թեւ առած և անհամեմատ գոյներով զգեստաւորուած, սիրային այրող լափող բոցով վրդովուն, որոնք ո՞վ գիտէ, զգալով թերեւս իրենց կեանքի արագ սպառումը, եռանդուն թըրթուումներով կը դառնան ու կը դառնան լամբարներու շուրջը, կարծես նոր կեանք խնդրելու անոնց լոյսէն, որու մերթ ընդ մերթ այնչափ կը մօտենան՝ որ գիտողին սիրտը փորը կը հատնի անոնց մուկգնարար դէպի վտանգը դիմելը տեսնելով: Եւ կը փորձէք նոյն վարկենին վաճակել, հեռացնել վանոնք այդ ակներեւ վտանգէն, որ լուսոյ շողշողումէն արբելու թէ բնագոյն մընալ, պատէ պատ զարնուելով, մերթ հոս մերթ հոն իրենց հաւկիթները կը ցանցեն, և յանկարծ կը նետուին վրագ, առանց հոգ ընելու թէ աչքի՞դ կամ քիթի՞դ կը զարնուին, և կամ կ'իյնան գրչի՞դ տակ: Ե՛հ, ալ այս անգամ համբերութիւննիդ հատած, կ'ուղէք ճգմել: Բայց կը մեղքնաք, անմեղունակ և տկար կեանք մը ոչնչացուցած ըլլալու խղճի խայթը չի կրելու համար: առանց հաշուելու սակայն թէ, այդ սպառելու մօտ կեանքը, իր ճգնաթամին մէջ ծնունդ պիտի տայ բազմաթիւ թրթուրներու, որոնք ձեր առտնին կարեւոր պիտոյքները ուտելով պիտի ոչնչացնեն անողորմաբար: Թրթուներ՝ որոնց դուք ճեճ անունը կուտաք: Մեռուցէ՛ք այդ սիրուն թիթեռնիկներէն հատ մը, հարիւրներով ցեց մէկ անգամուն ոչնչացուցած պիտի ըլլաք: Մի՛ կարծէք որ անոնք ձեզի հաճոյալի, ժամանցներ նուիրելու համար շուրջերնիդ կը թափառին: ո՛չ, մի՛

խաբուրք անոնց արտաքին հրապույրէն, վասն զի՝ այդ կենդանի գոյներով չպարուած շնորհագեղ մարմիններուն մէջ, ձեր բրդեղէն, մուշտակեղէն եւայլն պիտոյքները կըրծող՝ փճացնող ուտիճներու հունտերը պահուած են, որոնց ապագայ կեանքը տալահովելու համար միայն կը թափառին ձեր շուրջը, զանոնք յարմարագոյն տեղեր գետեղելու համար, հետեւելով միշտ իրենց բնագոյնին:

Նշմարած ըլլալու էք անշուշտ որ, երբ կրկին՝ ամառ գիշերներ պատուհանները գոց սինկիին մէջ նստած էք, քիչ կամ շատ թըւով փոքրիկ թիթեռնիկներ կուգան, և ապակիներուն զարնուելով ներս մտնել կը փորձեն. կարծես պաղատագին թուրուումներով, և միամիտ կեղծաւորութիւնով մը կը խնդրեն ձեզմէ, որպէս զի գթաք իրենց տկարութեան, և գիշերուան մութին մէջ փողոց չի թողուք զիրենք: Ե՛հ, եթէ խաբուրք անոնց թախանձումին, ծպտուն թըշնամին ձեր ձեռքով ներս առած պիտի ըլլաք, որոնք պահ մը իրենց սիրուն թռիչներով կը զբաղեցնեն զձեզ. բայց դուք կը յոգնիք զանոնք գիտելէ, և անոնք ալ թռչտելէ. ոյլ ևս չէք յիշեր անգամ զիրենք և որ մ'ալ տանը մէջ պտտած ատեննիք, կը տեսնէք որ ձեր դարաններուն դռան ներսի կամ դրսի կողմը, անտուկներու կախարիչին եզերքները, կամ թիկնաթուղներու կռնակը, և կամ ծալուած բրդէ հագուստներու, գորգերու եւայլն ծալքերուն մէջ թիթեռնիկ մը կառչած կը մնայ. կարծես թէ կ'ապրի նա տակաւին: Եթէ հետաքրքրուիք իրմով, կամացուկ մը կը մտնեալք զայն բռնելու համար. բայց հարկ չիկայ այդչափ զգուշութեան, նա մահացած է արդէն, և իր գոյութենէն չոր կմախք մը միայն մնացած է իբր յիշատակ. և սակայն մտածեցէք անգամ մը որ, հնազանդելով բնութեան ազդու կամքին, նա մահանալէ առաջ՝ իր էութեան խորէն քաղուած զտուած կենսատու հիւթով բազմաթիւ կեանքեր արտադրելով անցաւ քնաց, որոնք իր ցեղի յարատեւութիւնը ապահովող ապագայ ներկայացուցիչները պիտի ըլլան: Մինչդեռ դուք, ի տես այդ անշնչացած գիակին, ձեր ցաւակցական արտայայտութիւնը կը նուիրէք անոր՝ «խեղճ

թիթեռնիկ» մ'ըսելով...: Ձեր հակիրճ դամբանագանն է այդ, որ իր մէջ անհուն փիլիսոփայութիւն մը կը պարունակէ, որ որ մ'ալ ձեր գորգերու կամ ուրիշ բրդեղէններու աւերը տեսնելով՝ «անիծեալ սերունդ» գոչելով կը վերջացնէք:

Սկսինք մենք ալ անոնց տեսակները ուսումնասիրել Սիրելի ընթերցողներ, որպէս զի զիրենք լաւ ճանչնալով, ըստ կարելոյն դիւրութեամբ անոնց աւերումներուն առաջքը կարողանանք առնել:

1. Մուշտակեղէնաց ցեց (tinea pellionella). — 1½ հար. մեթր թեւատարածութեամբ փոքրիկ թիթեռնիկ մ'է, որուն վերի թեւերը նեղ և երկայնաձիգ, գորշ արծաթագոյն փայլով, իւրաքանչիւրը երկու պզտիկ սև բիծերով դրոշմուած են: Ասոր թրթուրը (ցեցը) մոշտակներու մէջ կ'ապրի, որոնց մագերուն արմատները կը կտրտէ զայդ մը մկրատածեւ սուր ծնօտներով, և կը քողոզուի անոնց տակէն իր տրահուող շինելով:

2. Ասուեղինաց ցեց (tinea sarcitella). — Վերինին մեծութեամբ և գորշ սպիտակագոյն երանգով. մէկ քանի չիտթ բիծեր ունի, որ վերի թեւերուն վրայ եղածները աւելի մութ գոյնով են: Ասոր թրթուրը կ'ապրի բրդեղէն կերպասներու և ասուկներու (շուխա) մէջ. որոնցմէ կտրտած ստեւներով մետաքսակերպ պատեան մը կը շինէ և անոր մէջ կը պահուրտի:

3. Ձարակեաց ցեց (tinea crinella). — Ամբողջովին աղօտ շիկագոյն (գումրալ). Ապրիլի 25էն վերջ մինչև յունիսի սկիզբները կ'երեւին, և մեծ քանակութեամբ կը թափառին պարապ սենեակներու մէջ, և ընդհանրապէս թիկնաթուղներու կռնակը կը կռւնէին: Իր թրթուրը կ'ապրի թիկնաթուղներու, բազմոցակներու մէջ լեցուած ձարերուն (գըլ, ձիւ մաղ) մէջ. մարտին կծիծի կը փոխուի, և ձարերը ծածկող կտաւը ծակելով դուրս կ'ելլայ:

4. Գորգեղինաց ցեց (tinea tapezella). — Վերի թեւերը վրայի կողմէն սև, բայց ծայրերը՝ ինչպէս գլուխը և տակի թեւերը ձերմակ են: Թրթուրը կ'ապրի հաստ բրդեղէններու և ի մասնաւորի գորգերու մէջ, իր զօրաւոր ծնօտներով կը կտրտէ մագերը և իրեն նրբուղիներ շինելով կը յառաջանայ:

5. Դեղին նակատով ցեցր (tinea flavifrontella). — Ամբողջ մարմինը դեղնագույն, իսկ ճակատը աւելի փայլուն դեղին գոյն մը ունի: Իր թրթուրը կ'ապրի յարդով լեցուած կենդանեաց մորթերուն մէջ:

(Շարունակելի)


2. ԲՈԼՍ

ՊԱՐՏԻՋՊԱՆԱԿԱՆ

ՊԱՐՏԻՋՊԱՆԱՍ (աշր)

(Շար. սեւ թիւ 9)

Պատուաստի գործիքներ. — Պատուաստի այլ և այլ տեսակներու վրայ խօսելէ առաջ, գործածուած գործիքներու վրայ ակնարկ մը նետենք, որպէս զի՝ յառաջիկային մեր ըսածները դիւրահասկանալի ըլլան: Ասոնց ամենէն գլխաւորը պատուաստի դանակն է, որ ինչպէս պատկերէն կը տեսնուի, 5—7 հ. մեթր երկայն չեղը մ'է, որուն սուր կողմի ծայրը պէտք է քիչ մը կտրցած ըլլայ: Կոթին միւս կողմը կը գտնուի փղոսկրէ, ոսկրէ կամ պարզապէս տօսախէ (շիմշիր) լեզուակ մը, որ պէտք է՝ երբէք մետաղէ չինել: Որովհետեւ՝ պատուաստելի ճիւղերուն կեղեւը բանալու ծառայելուն համար, մետաղը դիւրաւ կը ժանգոտի և ծառին հիւթը կ'ապականէ: Կը գործածեն նաեւ յօտոց (serpette պուտայընը պրչաղը) որ ամենուն ալ ծանօթ է իր ձեւով:




Պա. 17 Պատուաստի դանակ Պա. 18 Սղոց

Պզտիկ ձեռքի սղոց, որուն չեղրը 18—20 հ. մեթր երկայնութիւն ունի. ակռաներուն

այն աստիճան չեղութիւն տրուած է որ, ճիւղ սղոցուած ժամանակ լայն փու մը կը բանայ, մը և այսպէսով դիւրութիւն կուտայ կանաչ և հաստը ճիւղեր կամ ոստեր կտրտելու: Կը գործածուի նաեւ փայտէ փոքր թակ մը (Թօքմար), որ հաստը ճիւղեր ճեղքելու համար, անով յօտոցին վրայ կը զարնեն: Նոյնպէս պէտք է ունենալ կարծր փայտէ երիթ մը (գամա), որ կը ծառայէ ճեղքին մէջ դնելու, որպէսզի բաց մնալով պատրուարը դիւրութեամբ տեղաւորի:


Քանի մը տարիներէ ի վեր յօտոցին տեղ կը գործածեն տեսակ մը երիթաւոր դանակ



Պա. 19 երիթաւոր դանակ Պա. 20 Պատուաստի դուր հաստը կոճկերու պատուաստումին համար: Որուն լեզուակը յօտոցին լեզուակին հատութիւնը ունենալով, թակով կռնակին կը զարնեն, ճեղքը կը բանան, և յետոյ գործիքին ծայրը գտնուած սապարաձեւ երիթը ճեղքին մէջ կը մտցնեն, կը բանան ճեղքը, և պատրուար տեղաւորելէ վերջը կը հանեն: Կայ նաեւ գործիք մը, որ մէջի կողմէն փղորակաձեւ (օլուքը) ըլլալով, ծայրէն կէս բոլորակի ձեւով կ'ընդհատուի է, և կը կոչեն պատուաստի դուր (օլուքը աշր պրչաղը), և կը ծառայէ մերձեցմամբ պատուաստներու համար:

Ֆռանալի այգեպանները կը գործածեն

տեսակ մը բերանը սուր կոնակը հաստը և չեղը նեղ կացինի ձեւով և երկայն կոթով դանակ մը, — որուն կրնանք եռանկյունաձեւ



Պատ. 21. — եռանկյունաձեւ դանակ

դանակ անունը տալ — երբ որթատունկերը արմատին վրայէն պատուաստել ուզեն, որով կարող կ'ըլլան հասակէկ արմատները անգամ ճեղքել, Այս դանակը՝ որուն բերանը պողպատէ և մնացած մասերը երկաթէ է, ամուղջը մէկ կտոր կը ներկայացնէ:

Բոլոր այս պատուաստի գործիները, որոնց վրայ խօսեցանք մինչեւ ցարդ, պէտք է միշտ խնամով պահել, գործածելէ վերջը խղճտել կամ ճարպոտել որպէսզի չի ժանգոտին և իրենց սրութիւնը չի բութանայ, Ասոնք կարելի է նաեւ գաւառներու մէջ իսկ վարպետ դարբիններու շինել տալ, հետեւելով մեր տուած չափերուն և պատկերներուն:

Կապ. — Պատրուանքը պէտք է հաստատ գիրքի մը մէջ կենան մինչեւ որ աղէկ մը զօդուն (խայնամիշ ըլլան) ենթակային: Ուստի՝ իրենց տեղը հաստատուելուն պէս, իսկոյն ճեղքուած մասերը իրար միացնելու է. և արդէն՝ եթէ ճեղքերը բաց մնան, մթնոլորտին ազդեցութիւններու տակ պատուաստի յաջողութիւնը անստոյգ կը մնայ. ահա այս պատճառաւ կը գործածեն կապեր: Կապի համար ամենէն յարմարագոյն նիւթը պէտք է ունենայ սա հետեւեալ՝ յատկութիւնները. խոնավութեան և չորութեան ազդեցութեանց տակ ոչ երկնալու և ոչ ալ կարծնալու են, առածիգ (լասթիկի պէս) ըլլալու են ըստ կարելոյն, որպէսզի միացած մասերը առանց խեղդուելու, հանգստօրէն ուռնին: Այս պայմանները ըստ կարելոյն կը լեցնեն հետեւեալ նիւթերը:

Մանած բուրդը, հարեւանցի կերպով ոլորելով, լաւագոյն կապ մը կ'ըլլայ պատուաստի. պատուաստը որչափ ուռնի, այնչափ բրդէ թելը կ'ընդլայնի: Բայց երբ հարկ ըլլայ մեծ քանակութեամբ ծառեր պատուաստել, այն ատեն խոշորիկէք ծառք մը յառաջ կը բերէ, այս պատճառաւ կը վերապահեն

բուրդը, նրբակազմ ծառերու պատուաստումին:

Պրտուի (խասր օթը) և կնիւնի (սազ) տեսակներ, որոնք գրեթէ ամեն տեղ և ամեն ճախնուտ վայրեր կը գտնուին. ասոնց տեսակները աշնան կը կտրեն և շուքին կը չորցընեն: Գործածութեան ժամանակ մէկ քանի ժամ կը թրջեն, յետոյ 30 հ. մեթր երկայնութեամբ և նեղ նեղ կը կտրեն: Բայց պատուաստի ժամանակ ուշադրութիւն ընենելու է որ առանց թաց ըլլալու տամուկ (նէմ) ըլլան: Թմբիներու (օխլամուր) և ուռնիներու (սէօյլուտ) փառեղները կը գործածուին նոյնպէս պատուաստները կապելու. գործածութեան ժամանակ ջուրի մէջ թրջող դնելով կը կակուղցնեն և նեղ նեղ շերտերու կը բաժնեն, որոնք խիստ լաւ և բաւական հաստատուն կապ կ'ըլլան: —

Պատուաստի մազառաքէ (աշը մսնունը). — Պատուաստը կատարելապէս յաջողելու համար պէտք է նաեւ ճեղքուած տեղերը օդի ազդեցութենէն պահել. ասոր համար թէեւ կը գործածեն շատ տեսակ նիւթեր, բայց ամենքն ալ իրենց անպատեհութիւնները ունին: Աղէկ տեսակ մազառաքէ մը պէտք է պատրաստուած ըլլայ այնպէս՝ որ արեւի տաքութենէն հալելով չի վազէ, և ցուրտ ժամանակներն ալ չի ճաթուտի: Պարտիզպաններէ ոմանք կը գործածեն տեսակ մը մազառաքէ, որ գործողութեան ժամանակ տաքցնել պէտք է: Հարկ չի կայ այս և ասոր նման մազառաքէներու բազադրութեան վրայ խօսիլ, որոնք իրենց անպատեհութիւններով օգտակարութենէն զուրկ են:

Լօմ Լըֆօն անուն Պէլլիցի (Բարիզի մօտ) նշանաւոր պարտիզպան մը հնարած է ընտիր բազադրութիւն մը, ուրիշ յառաջ եկած մազառաքէն անթերի կրնայ նկատուիլ, և որուն ահաւասիկ պատրաստութիւնը.

Դեղին մեղրամոմ	65 կոսմ
Բեւեկնիի խէթ (թիրէ մէնթի)	63 »
Ճերմակ ձիւթ (չամ սագըզը)	32 »
Ոչխարի ճարպ (իջ եաղը)	16 »

Որոնք մէկտեղ հալեցնելով թիթեղէ տուփերու մէջ կը լեցնեն, և բերանին գոցելով կը պահեն:

Այս մազառաքէն կակուղ խմորի մը թանձրութիւնը ունենալով, փայտէ դանակով մը

դիւրութեամբ կը քսուի պատուաստին վրայ . մէկ քանի օրէն կը չորնայ , և այնուհետեւ ոչ արեւին կը կախուղնայ , և ոչ ալ ցուրտին կը ճաթուտի . Թէեւ պատրաստ տուփերով կը ծախեն , բայց ամեն ոք ալ կրնայ դիւրութեամբ շինել վերայիշեալ բաղադրութիւնը ճշգրտօրէն գործածելով :

Պատուաստի տեսակները . — Պատուաստի տեսակները խիստ շատ ըլլալով , իրենց ձեւին և գործածութեան եղանակին համեմատ 3 գլխաւոր բաժանումներու ենթարկած են , և ասոնք ալ իրենց կարգին կը պարունակեն դասակարգէր : Թէեւ 2005-ն աւելի պատուաստի տեսակներ կը հաշուեն , բայց մենք հոս ամենէն կարեւորներուն վրայ պիտի խօսինք :

(Շարունակելի)

Ղ. ԲՈՒՍ

ԱՌՏԵՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ԸՍՊԵԼԻՆԵՐ

Պատասխան քիւ 11 հարցման

Ըմպելիներու վրայ խօսինք քիչ մ'ալ , որ հիմա մեր ստուերու մէջ այնքան մուտք գտած է , և անշուշտ աղէկ կ'ըլլայ ճանչնալ մեր գործածած ըմպելիներուն օգտակար կամ վնասակար ըլլալը , ուստի այս մասին աւելցնենք ներկայացնել մեր ընթերցողներուն , որ ահաւասիկ :

Աւելցնենք՝ 5 դասակարգի բաժնած են ըմպելիները , իրենց մէջ պարունակած գոյեղներու գերակայութեան համեմատութեամբ :

1. Զրային ըմպելիներ . — Այս դասակարգին գերընտիր ներկայացուցիչը ջուրն է :

Աւելցնենք՝ 5 դասակարգի բաժնած են ըմպելիները , իրենց մէջ պարունակած գոյեղներու գերակայութեան համեմատութեամբ :

կրորդ երբ շատ ջուր խմուի . ստամոքսի արտադրած մարսողական հիւթը իր մէջ կը հալեցնէ , և հետեւաբար ալ մարսողութիւնը տկարացնելով , ստամոքսային ընդլայնում , և անհանգստութիւն , և այլ հիւանդութիւններու տեղի կուտայ , աղիքները լուալով կ'անցնի կ'երթայ , և որով կզկզանաց արտաժանուած շարունակ անկանոն կերպով կը կատարուի :

Ջուրը կրք աիէ մը կը բղիթի , և անոր անարատութիւնը հաստատուած է անալիզներով և նշանաւոր բժիշկներու վկայութեամբ . — ինչպէս Պօլսոյ կարգ մը ջուրերը — անոր չափաւոր գործածութիւնը միշտ օգտակարապէս յանձնարարելի է , ուրիշ ամեն կարգի ըմպելիներէ :

Դառնահամ (լեղի) բուսածուրերը օգտակար են , մանաւանդ չափազանց տաք եղանակներու մէջ , ասոնցմէ կը յանձնարարուին գայլստի (պիրաշխչի) քենքինտի քաքաօի եւայլն բուսածուրերը :

2. Թրուաչ ըմպելիներ . — Ասոնք կը կազմեն սովորաբար ջրով և թթուարեր պտուղներու հիւթերով , ինչպէս լիմօնատ , նարնջատ հազարջատ (ֆրէշի իւզիմիլ) . կեռասի , արքամորի (գճառուլ) եւայլնի օշարակ : Թէեւ անորո՞ք համ են ասոնք , և ամառուան տաքերուն յարմար գոգացուցիչ ըմպելիներ : սակայն չափազանցելու չէ որովհետեւ ստամոքսը թէ կը նեղեն և թէ կը յոգնեցնեն պարզ ջուրի պէս , նամանաւանդ մարսողութեան գործողութիւնը կը դժուարացնեն :

3. Անաշխատ ըմպելիներ . — Թէյը և սուրճը . Եւրոպական դրութիւնով պատրաստուած սալ սուրճի վրայ քիչ մը ոտ կամ քօնեաք աւելցնելով օգտակար և յանձնարարելի ըմպելի մը կը դառնայ , մասնաւորապէս անոնց համար , որ ծանր աշխատութիւններով յոգնած կ'ըլլան . այսինքն երկրապործներու , շինութեանց գործաւորներու , մեքենագործներու , և մտային աշխատութիւն ունեցողներու եւայլն համար :

Թէյի ջեւաթուրմը սուրճէն աւելի աւելցնելու համար կը նկատուի , ջրային դրութեան վրայ օգտակար աղիքներով մը կ'ընէ , անոր գրգռումը հանգարտեցնելով և կանոնաւորելով , մարսողութեան կը նպաստէ և ստամոքսի քառակիչ կարողութիւնը (անուանքները

մարմնոյ վերածել) կ'աւելցնէ, մարմնային ուժը կ'արթնցնէ - և կը վերակենդանացնէ: Իր այս յատկութիւններուն համար կը յանձնարարուի առ հասարակ ամեն կլիմաներու տակ ապրող անձանց:

Ձմեռը կը գործաճուրի ընդհանրապէս թէյի ջեռաթուրմը տաք, ինչպէս սովոր ենք մենք, բայց թէյը աւելի օգտակար գործածութիւն մը ունի ամառուան տաք եղանակներու մէջ, որու վրայ գաղափար չ'ունինք մենք, ուստի կ'արժէ որ անցողակի բացատրենք:

Մանրէագիտութիւնը ծնելէն ի վեր բոլոր առողջապահներէ կը յանձնարարուի, իբր ըմպելի գործածած ջուրերնիս զտել, թորել, եռացնել, այսինքն բաւին բուն նշանակութեամբ ստերիլացնել (stériliser, որեւէ չուրթեան մը գործօն և արտադրիչ մասը առժանաբար անկարողութեան մոտենել, ջուրը եռացնելով և պղնձեցնելով, իր մէջ գտնուած մանրէները թէեւ կ'ոչնչանան առժամաբար, բայց եռացուելէն վերջը երբ նպատակաւոր պայմաններու մէջ գտնուի, կրնայ նորէն ապականիլ մանրէներով): Բայց եռացնելով ստերիլացած ջուրը անհաճօն և թթուածինէ զուրկ ըլլալուն, իր բնական յատկութիւնները կը կորսնցնէ, և գոյութեամբ կը խմուի:

Երկրորդ շատ մը դաւառներու և գիւղերու մէջ գիտենք թէ տենդը (քարժւա) որ աստիճան շատ է, ուրիշ վտրակուած անձինք տրկար, անգոր, գունաթափ, մարսողութիւննին խանգարուած, ստամոքսնին և փայծաղնին (ուսլաք) ընդլայնած, խոշորցած և շատ տեղեր ժանտատենդի (թիֆ) նման կարգ մը տարախիսիկ հիւանդութիւններ ամեն տարի հազարաւոր մարդկանց կեանքը կը վերցնեն: Բոլոր այս հիւանդութիւնները յառաջ կուգան իրենց խմած ջուրէն, որ ապականուած է զանոնք յառաջ բերող մանրէներով և ժահրերով (հիւանդութեան թոյն): Սովորաբար դաւառները խմուած ջուրը կ'առնեն քաղքին կամ գեղին մէջէն, մօտէն տնցած գետակէ մը: Եւ բոլոր բնակչաց աղտոտութիւնները կը պարպուին այդ գետակին մէջ: Կրրնաք երեւակայել հիմա թէ, այդ ջուրը ո՞ր աստիճան անյարմար է խմելու՝ առողջապահութեան տեսակէտերով: Թէեւ մեր ժողո-

վրդեան մէջ սխալ նախապաշարում մը կայ թէ, «ջուրը աղտոտութիւն չի վերցնէր»: Բայց գիտցած եղիք որ, թոյներու, հիւանդութեանց ժահրերու և մանրէներու համար, անիկա նպատակաւոր վիճակ մը ունի, ուստի՝ զգուշացէք ըստ կարելւոյն այդ կարգի ջուրերը խմելէ: Եւ մասնաւորապէս այն կարգ մը քնայուն և լճացեալ ջուրերէ, որոնք ալ աւելի ծանր և բռնաւորուած կըլլան հիւանդութեանց ժահրերով: Եւ դժբաղդաբար երկրագործներ երբ դաշտը կը գտնուին ամառ ատեն, իրենց տրամադրութեան տակ այդ աղտոտ ջուրերէն ի զատ խմելու ոչինչ գտնաւով, կ'ստիպուին զայն գործածել, և անգիտարար կը վարակուին վերը յիշուած հիւանդութիւններէն:

Նպատակնիս ամառուան տաք եղանակներու մէջ թէյի մէկ մասնաւոր գործածութիւնը յանձնարարել էր որ մեզ այս չափ հեռուները տարաւ: Իսկ ըրէք ուրեմն, երբ այդ տեսակ պարագաներու մէջ գտնուիք, մինչեւ իսկ քաղաքները և Պօլսոյ մէջ կրնաք շատ անգամներ փոխանակ պաղ ջուրի, հետեւեալ կերպով պատրաստուած թէյ գործածել:

Ջուրը եռացուցէք, և սովորականէն քիչ թէյ դրէք մէջը, գոցեցէք բերանը, և ձգեցէք որ պաղի, յետոյ շատ քիչ քանակութեամբ չաքար դրէք մէջը, լեղիութիւնը առնելու համար, և գործածեցէք այս կերպով, որ թէ առողջարար, կազդուրիչ ըլլալով, վերը յիշուած անտեղութիւններէն ալ ազատած կըլլաք եթէ ուզէք կրնաք թէյին հետ փոքր քանակութեամբ նարնջի ծաղիկ ալ գործածել: Այսինքն ջուրը եռացուցած ատեն թէյին հետը մէջը ձգել, որ անոր մարսողական կարողութիւնը աւելի ազդու կընէ և ջրային հանդարտութեան կը նպաստէ: Աւելի զովարար յատկութիւն մը տալու համար ալ խմած ատենները կամ առաջուց, ինչպէս որ կ'ուզէք, մէկ քանի կաթիլ լիմոնի հիւթ աւելցուցէք վրան: Կամ եթէ կ'ուզէք, առանք չաքար դնելու ջեռաթուրմին մէջ, միայն լիմոնի չուսու պէրէք: Ահա այս կերպով կ'առնենաք ընտիր ըմպելի մը:

Անուշահոտ ըմպելիները, մարմնոյ գործարանակազմութեան վրայ հաճելի տպաւորութիւն մը կ'ընեն և կը նպաստեն մարսողու-

թեան և արեան չըջանին, բայց ջղայինները պէտք չէ որ գործածեն:

4. Խմորած րմպիլիներ. — Գինին, գարեջուրը (պիրա) եւայլն. որոնց գործածութիւնը աշխարհ գիտէ. եթէ քիչ գործածութիւն օգտակար են: Մենք ունինք Տաճկաստանի մէջ սամաուան տաք եղանակներու յարմար զովացուցիչ ըմպելիներ, չոր միրգերէ պատրաստուած. զորս խոշապ կ'անուանենք. ինչպէս չամիչով, սաւորով, ծիրանով եւայլն. Ասոնց կարգին կրնաք դասել նաեւ այծեղջեր (քէչի պոլճուղու) օշարակը, որ հարկաւ կը կոչեն:

5. Ասիկայ կը բաժնուի իր կարգին երկու տեսակի.

Ա. Թորեալ պփուկալի րմպիլիներ. — Գօնեաք, չանչօղի (տիւզ), մասթիքա, շաքարօղի (ուօմ) կեռասօղի (քիւշ) եւայլն: Ինչ որ ալքօլ է, առողջապահական տեսակէտով իր ըմպելի օգտակար չէ, մասնաւորապէս իր չափազանց գործածութեան մէջ, թեւեւ ներքի ըլլայ երբեմնակի անոնց գործածութիւնը հաճոյալի ժամանցներու մէջ պիտի ըսենք, որպէս զի մենք ալ չափազանց առողջապահամիտ չ'երեւինք:

Բ. Կարգին տակ կ'երթան լոլոր ոգելից ըմպելիները. որոնց պատրաստութեանց մէջ կը մտնան մեծ քանակութեամբ ալքօլ, շաքարջուրի հետ խառն, և անոնց պուտեմտական տեսակներուն մէջ ալ կարգ մը բնական կամ արուեստական իսկութիւններ (րուհ), որոնք կը ծառայեն միմիայն ըմպելիին տարբեր և հաճոյալի համեր տալու, որով և կը վերագրեն իրենց, ախորժարեր (apéritive) և մարսուցիչ (digestive) յատկութիւններ:

Ախորժարեր կամ դանօղի (ամեռ) կ'անուանեն այն ըմպելիները, զորս կը խմեն ճաշէն առաջ, զուտ կամ ջրախառն, ախորժակ բանալու սրտարուակաւ: Այս կարգի ըմպելիներուն ամենն ալ առողջութեան վնասակար են. որովհետեւ նոյն վարկերին ստամոքսը բոլորովին պարապ ըլլալով, այդ դուրսը ըմպելիները սաստկապէս կը գրգռեն ստամոքսը, և անմիջական կերպով արնոտի չըջանալութեան մէջ կը մտնան: Մտիկ ըրէք թէ մեծանուն Թուրքո ի՞նչ կ'ըսէ այս առթիւ, «ճաշէն առաջ ախորժարեր ըմպելի-

լիներ առնել, կը նշանակէ ստամոքսի դուրսը սխալ բանալով բանալ»:

Գլխաւոր ախորժարերներն են. ապէնթ, պիթըր և վերմութ (Տաճկաստանի մէջ մասնաւորապէս մասթիքա և տիւզ): Բոլոր մարսուցիչ ըմպելիներն ալ նմանապէս վնասակար են, սա տարբերութեամբ միայն որ, իրենց աղդեցութիւնը աւելի թեթեւ է վերիններէն. որովհետեւ անոնք թէ քիչ քանակութեամբ կը խմուին. և թէ գլխաւորապէս ճաշէն վերջը, երբ արդէն ստամոքսը կատարեւապէս յագեցած է անուցիչ նիւթերով:

Մարսուցիչ ըմպելիներուն գլխաւոր տեսակներն են, շառթաօզ, պէնէտիքթին, քիւռասօ, անիզէզ և քիւմէլ, եւայլն:

Մեր մէջ ալ քօնեաք անուան տակ կարգ մը թունաւոր ըմպելիներ, որոնց ինչ ըլլալը ոչ ծախողը գիտէ (*) և ոչ ալ առնողը, ընդհանրացած է այնչափօք, որ ամենէն հարուստ դասակարգէն մինչեւ յետին դասակարգին տուները կը գտնուին այսօր:

Անուշահոտ իսկութիւններ կ'աւելցնեն այդ կարգի ըմպելիներուն մէջ. պարզապէս հրապարակի ստորին ալքոլներու գէշ համը և գարշահոտութիւնը ծածկելու համար: Ժամանակ մը այդ իսկութիւնները կը պատրաստուէին անուշահոտ ծաղիկներէ, օգտակար տունկերէ եւայլն. որոնք մինչեւ ատիճան մը գործարանակազմութեան վրայ բարերար աղդեցութիւն մը կը ներգործեն, մինչդեռ այժմ հրապարակի վրայ ծովաւաճ կարգ մը կեղծանուն ըմպելիներ, կը պատրաստուին առ հասարակ վերը յիշուած գէշ ալքոլներով, որոնց տարբեր համ, հոտ տուլու համար, կը խառնեն անոնց քիմիական բաղադրութիւններով պատրաստուած վտանգաւոր իսկութիւններ, ասոնք առանց բացառութեան, և բացարձակ կերպով թոյն են, ինչպէս Հանրագիտակի յարգոյ աշխատակից քիմիագործ Յ. Ճէլալ էֆ. Գրեց (տես Հանր. թիւ 6, 7): Եւ որովհետեւ այդ կարգի ըմպելիներու գործածութիւնը ընդհանրացած է մեր մէջ ալ, ինչպէս ըսինք,

(*) Բացառութիւններ կան անցուց, բայց աղէկներն ալ այնչափ սուղ եւ հազուագիւտ են որ շատերն առնոց երեսը չեն տեսնար:

ոչ ծախսողը գիտէ և ոչ ալ առնողը, ասոնց ի՞նչ ըլլալը, յարգոյ նամակագրի մը բաղձանաց համաձայն, այսուհետեւ պիտի դնենք մեր առանին անտեսականաց բաժնին մէջ հետզհետէ անոնց պատրաստութեան եղանակները ներկայացնելով ազնիւ ընթերցողներուն եւ ընթերցողահիններուն մասնաւորապէս այնպիսի միջոցներ, որոնցմով կ'որոշ ըլլան դիւրութեամբ, աժանութեամբ և ըստ կարելոյն հրապարակի ըմպելիներէն նուազ վտանգաւոր և պատուական ըմպելիներ պատրաստել իրենց տանը մէջ խի, առանց բազմածախ գործիքներու պէտք ունենալու:

ԱՐԱՔՍ

ԳՍԾՏԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Գորս (գորպաղը)

Մի՛ հաւածէք գորսը, մի սպաննէք երկրագործութեան այդ ամենաօգտակար կենդանին, վերջը շարաշար կը տուժէք: Անիկա կանաչեղէնով չի սնանիր. իր միակ սնունդը կը կազմեն խխունջ (սիւմիւկի) և ուրիշ միջատներ, որոնք երկրագործի բերքերուն մեծամեծ միւսանք կը հասցնեն: Երկու գլխաւոր տեսակ ունինք մենք գորսի. նախ կանաչ գորս (rana esculanta), որ էսպէս ջրակեաց է և կը սնանի ջուրի մէջ ապրող որդերով, միջատներով, մոզուկի (սիւկի սիւնէկ) թրթուրներով եւ այլն: Եթէ այս կանաչ գորսը յանցանք մ'ունի, այն ալ ջուրերու մէջ գտնուած ձկան կիթերը և մանր ձուկերը ուտելն է:

Երկրորդը՝ շիկագոյն կամ ոստան գորս (rana temporaria) որ միւսին պէս չի կոկոսար, նուազ գեղեցիկ է, և կը բնակի դաշտերու, պարտէզներու արօտներու (չայլը) և անտառներու մէջ, ուր ընդհանրապէս հողը խոնաւ կ'ըլլայ, և խոտերը կամ կանաչները խիտ և բարձր: Մեծ քանակութեամբ, միջատ, զեռուն և խխունջ կ'ոչնչացնէ. կ'ապրի միմիայն կենդանի որսերով, որոնց վրայ կը նետուի յանկարծական կերպով, կը բռնէ զանոնք իր լեզուով, որ շատ դիւրաթեք է:

Այս շիկագոյն գորսը միայն փետրվարին ջուրը կը մտնէ, այն ալ հաւկիթ ածելու համար, ուրիշ վերջը կը վերադառնայ կրկին իր ցամաք: Հաւկիթէն ելած շերտիւկները (գորսի ձագերը) 3 ամիսէն իրենց խորհացումը լրացնելով կը թողուն ջուրը, և կանցնին ցամաք:

Գորսի նմանող ուրիշ կենդանի մ'ալ կայ, որ անշուշտ շատերնիդ տեսած ըլլալու էք. ասոր դօդօշ (crapaud, գաւրա գուրպաղը) անունը կուտան, որուն մարմինը ամբողջ այտուցներով (գապարճը) ծածկուած է, և գորշ մոխրագոյն է մութ կանաչի վրայ. ոտքերը աւելի կարճ են քան միւս գորտերունը, տեղով տգեղ, քալուածքով դանդաղ, գրգռուած ատեն կ'ուռենայ. վրայի այտուցներէն մոխրագոյն և այրող հիւթ մը կ'արտադրէ, և միեւնոյն ատեն ալ գէշ հոտ մը կ'արտադրէ: Իր միակ սնունդը կը կազմեն գորտերուն պէս խխունջ, ուր, զեռուն եւ այլն: Ահա այս պատճառաւ յոյժ օգտակար կենդանի մ'ալ աս է, պաշտպանեցէք զինքը, խնայեցէք այդ տկար կենդանին ուր որ տեսնէք, վասն զի ան ալ երկրագործութեան օգտակար կենդանիներու կարգը դասուած է:

Լ. ԲՈՒՍ

ԱՆՏՈՆ ԷՓԵՆՏԻ ԱԶԱՐԵԱՆ

Մեծ ու ցաւալի կորուստ մը ունեցանք, կորուստ մը որ հաւասարտպէս ամեն հասարակութեանց ցաւ պատճառեց. Գերերջանիկ Աղարեան Ս. Պատրիարքի եղբայրը՝ Անտոն էֆ. Աղարեան ի Տէր հանգեաւ ամսոյս 6ին:

Տարօրինակ զուգադիպութեամբ՝ ճիշդ անցեալ տարի միեւնոյն օրը ու միեւնոյն ժաման կը մեռներ նաեւ միւս եղբայրը Յարգելի անձնաւորութիւն մը՝ Արիստակէս էֆէնտի Աղարեան:

Հայ Հռոմէականաց Պատրիարք Տ. Աղարեան Սրբազան ինք հակեց անձամբ իր եղբոր սնաբին մօտ, և իր ձեռքը Ս. Հա-

շորդութիւնն ու վերջին Օծում տուաւ :

Յուդարկաւորութիւնը երեքշաբթի օր կատարուեցաւ մեծ հանդիսիւ Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ ի ներկայութեան խուռն բաղմութեան , ընդ որս կը նշմարուէին Գեր. Տ. Ազարեան Սրբազան , գեոպանատանց թարգմանք , Պատր. Փոխանորդ Գեր. Գաբրիէլ Մ. Վ. Ճէվահիրճեան և Յունաց Պատրիարքին , Պուլկարաց Էկզարքին , Ասորոց Եպիսկոպոսին ներկայացուցիչներուն և Բողոքական Հայոց Ազգապետին և այլոց :

Դադաղը ծածկուած էր բազմաթիւ պսակներով : Եկեղեցական արարողութիւններէն վերջ ներկաները իրենց ցաւակցութիւնը յայտնեցին Գերբըջանիկ Ազարեան Պատրիարքին , ինչպէս նաեւ ողբացեալ Անտոն Էֆէնտիի զաւակաց և եղբոր Ժօզէֆ Էֆէնտիի :

Հանգուցեալը 62 տարեկան էր , երեք մանչ ու երեք աղջիկ զաւակ կը թողու , իր զաւակներէ երկուքը Բարիզ սեղանաւորական գործերով կը զբաղին , և լսելով իրենց հօր մահը , եկան ու ներկայ գտնուեցան յուդարկաւորութեան , իսկ աղջիկներէն երկուքը ամուսնացած են և մէկը նշանուած է :

Հանգուցեալ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ արդարեւ սոյն ցաւալի կորուստին առթիւ՝ որ ունեցան Գերբըջանիկ Ազարեան Ս. Պատրիարք և համայն գերդաստանն Ազարեան :

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ ՀԱՆՐԱՊԻՏԱԿԻ

Թիւ 24. — ԻՒՍԿԻՒՏԱՐ. Խոստացած էիք այլեւայլ հարցմանց պատասխանել՝ ուրկէ համարձակութիւն գտնելով կը փափաքիմ նախ գիտնալ թէ՛ Անասնարուծական ձիւղին վերաբերեալ հարցումներ ալ կրնա՞ն ուղղուիլ , և եթէ այո՞ , ուստի հաճեցէք բացատրել թէ «Տօղուճա» հիւանդութիւնը

ինչպէս առաջ կուգայ և ի՞նչպէս կը դարմանուի :

Կը յուսամ թէ քիչ ժամանակէն պիտի հաճիք յարմար պատասխան մը տալ , սրուն անձկանօք կ'սպասեմ (անշուշտ ձեր թերթին միջոցաւ) :

ԳԱՒՍՈՒՍՅՈՒՄ

Մ. Խ. — Պիտի գրուի նաեւ Անասնարուծութեան վրայ , այսինքն ընտանի կենդանիները պահել , մեծցնել և զանոնք չահագործելու գիտութեան վրայ : Ինչպէս և Անասնարուծութեան վրայ կարեւոր գիտելիքներ ի գէպ ժամու : Սիրով պիտի պատասխանենք ձեր հարցման , եթէ հաճիք այդ յիշուած հիւանդութեան ո՞ր կենդանիներու յատուկ ըլլալը , և ի՞նչ երեւոյթներ ունենալը բացատրէք : որովհետեւ կենդանեաց հիւանդութիւններն անունները մէկ գիւղէն միւսը կը տարբերի . և միեւնոյն անունով ամեն գիւղ կամ գաւառ տարբեր հիւանդութիւններ կը ճանչնան :

Արդ՝ եթէ կենդանեաց հիւանդութեանց վրայ հարցումներ ուղղուին Հանրագիտակի , կը խնդրուի որ այդ հիւանդութեանց անունին հետ ըստ կարելոյն արտաբանական գլխաւոր նշաններն և երեւոյթներն ալ սլարգեն , սխալմանց մէջ չ'իյնալու համար :

Թիւ 25. Կ. ՊՈՒՒՍ. — Ա. Մանուկեան . — Պարտիզիկ մ'ունիմ , ծաղիկներն ալ շատ կը սիրեմ , թէեւ մի քանի թողար ծաղիկ ունիմ , բայց կ'ուզեմ հասկնալ թէ՛ ի՞նչպէս զանոնք մշակելու է . օրինակի համար՝ երբ ոռոգելու է , երբ սերմանելու է և երբ դուրս հանելու է ջերմոցէն եւայլն :

Մ. Խ. — Ձեր ունեցած ծաղիկներուն անունները , տեսակները խմացուցէք , որպէս զի ըստ այնմ պատասխանուի :

Թիւ 26. — Գաւառէ մը . Մ. Մ. մեզ կը հարցնէ «Արհեստս եւալորգիութիւն է , հոս նիքէլ գիտցող երկու հոգի կայ , ես չեմ գիտեր՝ կ'ուզեմ գիտնալ , կը համարձակիմ ձեզ հարցնել թէ նիքէլը ի՞նչպէս կը պատրաստուի , և կը խնդրեմ որ պարզ լեզուով գրէք որ հասկնամ , պաղլը գիտեմ , սակայն կարելի է ուրիշ դեղ մը պակաս չի դնեմ , դեղերուն գաղղիւրէն անուններն ալ գրէք . մէկ մ'ալ երկաթի վրայ պաղլը տալու համար ի՞նչ դեղ գործածելու է» :

Թիւ 15. — ՌՕՏՈՍԹՕ. Մ. Յ. Մալաքեան մեզ կ'իմացնէ թէ՝ «Կարմիր թիթեռնիկէն աւելի ձմեռուկի և սեխի փնասակար փոքրիկ պատենածեւ (coléptère) միջատ մը կայ, որ իր թեւերուն վրայ կը կրէ սեւ կէտեր, որ գաւառներու մէջ զատիկ (bondieu) կը կոչուի»:

Թիւ 27. — ՄԱՆՁԵՍԹՐ. — Յ. Բ. կը հարցնէ թէ՝ փոնջը ի՞նչպէս կը պատրաստուի:

ՄԱԼԿԱՐԱ. — Յ. Վառաժ Արապեան. — Ստացանք նամակներդ. շնորհակալութիւն, պիտի պատասխանենք:

ՄԱՔՐԻ-ԳԻՒՂ. — Ա. Նիկողոսեան. — Ձեր նամակը ստացանք, յարմար առիթով մը պիտի պատասխանենք:

ԳԱՏԻ-ԳԻՒՂ. — Մելքոն Սուքիասեան. — Շնորհակալութեամբ կ'ընդունինք ձեր աշխատակցութիւնը:

ԻՋՄԻՐ. — Խ. Մումեան. — Մեր թերթը բաց է ամեն արհեստակիցներու առջեւ, փափաքողը կրնայ ժամանակին իր կարծիքը յայտնել:

ՆԱՆՍԻ. — Օ. Սարաճ. — Ստացանք գրութիւններդ, շնորհակալութիւն, չարունակեցէք, բայց թուղթին մէկ երեսը գրեցէք:

ԻՋՄԻՏ. — Յ. Չ. — Շնորհակալութեամբ կ'ընդունինք ձեր ակնարկած բարեկամին հանելուկը: Ձեր ըսած յօդուածները սիրով կ'ընդունինք, շնորհակալութիւն:

ԿԵՍԱՐԻԱ. — Տ. Վ. Պ. — Ձեր փափաքին համեմատ անուննիդ կը վերցնենք գործակուցայանիկն մէջէն, խնդրենք մեզի ուրիշ մը ներկայացուցէք:

ՌՕՏՈՍԹՕ. — Ա. Բօթաճեան. — Ստացանք ձեր նամակը. Արարհամ էֆ. Հայրիկեանի թիւերը կը զրկենք:

ՄԱՐՁՈՒԱՆ. — Ս. Գամպերեան. — Բաժանորդ նշանակեցինք ձեզի, շնորհակալութիւն ձեր զգացմանց:

ՆՈՒԷՐ

Շնորհակալութեամբ կը ծանուցանենք թէ գեղապործ Խաչիկ էֆ. Ֆէսճեան,

կը նուիրէ վեցամսեայ Հանրագիտակ մը մեր որոշած վարժարանին, Տնօրինութիւնս կը շնորհակալութիւն արտայայտուի ձեր արժանիքին՝ առաջին թիւէն սկսեալ:

Մեր կոչումը, որ ըրինք հասարակութեան, ուրախ ենք որ եռանդով կրնա՞նք զուարթ ամէն կողմէ, աւելցող է ըսել թէ որքան պիտի օգտուի այս նուէրներէն՝ ուսանողութիւնը. դատելը կը թողունք մեր ընթերցողաց:

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Հանրագիտակ ուղղուած գիտական և արհեստական հարցմանց տրուելիք պատասխաններու մասին մասնագէտներու կարծիքները հաճութեամբ կ'ընդունինք:

ՏՕԲ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր ղինուորական և քաղաքային հիւանդանոցներու մէջ պաշտօն վարած է, պատիւ ունի ծանուցանել թէ՝ այս անգամ իւր բնակութիւնը հաստատած է Գատը-Գիւղ Պատէմ փողոց թիւ 12. ուր հիւանդ կ'ընդունի ամէն օր, ի մասնաւորի աչքի հիւանդութեանց: Իսկ Չարեքչարթի և Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկեղեցւոյ դիմաց Չպուքճեան լեւոն էֆէնտիի հանրածանօթ Դեղբարանը, և հոն իրեն գիմով աղքատ հիւանդները ձրի կը դարմանէ:

5-10

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԼՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶՈՐԻ

Ամեն կերպով յանձնարարելի մանուկներու և պատանեկաց համար, էջ 200, Գին 6 դրուշ: 190 հատ առնողին 40 զեղչ: Աղքատ ուսանողներու շատ օրուան նուէր մը կրնայ ըլլալ:

ԱՐՏՈՒՍԱՔԵՐ ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

1. ԱՐՄԱՆԵԱՆ ՆԻ Ս. ԲՄԻՐՁԷ
3. Պոլիս Գնահիտան խանի անի թիւ 3

Վաճառատունս պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամէն տեսակ թարմ գեղորայք. վերաբուժական գործիքներ, Անգլիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գոնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: 1. Ասլանեան և Ս. Էմիրգէ լնկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններուն: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայել իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչիլի գներով: Զարաճի միւլկներու և լուերու եւն: Թամար միջատասողան փոշի Poudre isecti ipe մեծաքանակ օրերեւ տուած ենք ուղղակի Տալմացիայէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմք յարգոյ հասարակութեան:

ՏՕԲ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր զինուորական և քաղաքային հիւանդանոցներու մէջ պաշտօն վարած է, պատիւ ունի ծանուցանել թէ՛ այս անգամ իւր բնակութիւնը հաստատած է Գատը-Գիւղ Պատէմ փողոց թիւ 12. ուր հիւանդ կ'ընդունի ամեն օր, ի մասնաւորի աչքի հիւանդութեանց: Իսկ Զարեքշարթի և Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկեղեցւոյ դիմաց Զպուքեան լեւոն էֆէնտիի հանրածանօթ Դեղբանք, և հոն իրեն դիմող աղքատ հիւանդները ձրի կը դարմանէ:

3-10

ԳՐԲԵՐՈՒ ՅԱՆԿ

Գլխաւոր ձեռնարկ — Մարդաբանութիւն. — Տ. Գ. Զարդարեան 1870. Թրգմ. Ս. Ղուկասեան էջ 139. — Սոյն գրքի մէջ կը խօսուի մարդկային տեսակին. ծագում մարդոյ և այլեւայլ շահեկան նեւթոյ վրայ, թէեւ մոռցուած գիրք մը կ'ընայ իր նորութիւնը ունեւալ Գին զեղչեալ 3¹ 2:

Կլիմայի մասին պարտ է յիշել. — Հեղինակ իշխանուհի Ուսուսով 1894, էջ 147. — Մանկավարժական հարցերով

զբաղողներու կարեւոր: Գին 5 զրուշ:
 Վաճառատունս ծանուցի. — Թրգմ. Ս. Ն. Յ. Էսաեան. — Խիստ բարոյական երկու վիպակներ կը պարունակէ: Գինը 6 զրուշ:

Օրհնոյ Դեղք. — Հեղինակ Տր. Բլեման. Թրգմ. Ե. Մուրատեան. — Ոյր մէջ կը խօսի գիշութեան և այլ հիւանդութեանց վրայ: Գին 5 զրուշ:

Անասական ինքերէր. — Երեք մասէ բաղկացեալ սոյն հատորիկը՝ որ կը պարունակէ 1. Ծնողք և իր զաւակունք, 2. Ծառու ապրանք, 3. Էթիկ կնիկ. — Շատ սիրուն կերպիւ նկարագրուած է մեր վարքն ու լարքը ամուսնական խնդիրներու մէջ: Գին 4 զրուշ:

Կը վաճառուի Զարդարեան Գրատունը: Գաւառները կը զրկուի սոյն գներով, առանց բութաի յաւելումի:



ՀՈՆԿ-ԳՈՆԿ-ՍԷՅԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՍՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ՆԻ ԻՍՏԳՈՒԼԵԱՆ
 ձեւալ պէյ խանի ցրան կից, թիւ X O

Ամենէն լաւ թէյերու ամենէն բնդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Զինական, Հնդկական, Ճափայի և Սէյլանի էն աղնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ՆԻ ԻՍՏԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

Հանրապետական կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս :
 Կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր :
 Երկրագործական, Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :
 Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն Հանրապետական լրագրի :

Կ. Պոլիս, Զարդարեան Գրաստան, Զագմաֆըլար-Նօգուսու քիւ 50

در علیہدہ چہما فی ہر ہدہ ۵۰ نومرولی زار طرایان کتب خانہ سندہ (حاضر اقبداق) مجموعہ علوم غریبہ سی ادارہ سندہ

Հանրապետական պատրաստ է ընդունել ամեն տեսակ ծանուցումներ, ազդարարութիւններ, խիստ գիւրամատչելի պայմաններով : Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն շնորհիւ երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը :

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պօղարեան	ԿԻՐԱՍՈՐ. — Արմենակ էֆ. Սօմունճեան.
ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ստեփան էֆ. Սափորիչեան	ԿԵՍԱՐԻԱ. — Գեոր. Տրդատ Կ. Վ Պալեան.
ԱՐԱԲԿԻՐ. — Յ. Պ. էֆ. Մանուկեան.	ՄԱՐԱՇ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
ԱԹԵՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան.	Վարժապետեան.
ԳՈՒՐՏ-ՊԵԼԵՆ. — Արժ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան.	ՄԱՐԶՈՒԱՆ. — Յովհաննէս էֆ. Յակոբեան.
ԳԱՀԻՐԵ. — Մ. Պաղտատար էֆ. Ս. Նաթանեան.	ՄՈՒՇ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ԷՐԶՐՈՒՄ. — Եղ. էֆ. Տ. Ալարեան.	ՊԱՆՏՏՐՄԱ. — Արմենակ էֆ. Ս. Մարեան.
ԹԵՀՐԱՆ. — Կարապետ էֆ. Բարսեղեան.	ՊԱՐՏԻԶԱԿ. — Վահան էֆ. Զիլունի.
ԻԶՄԻՐ. — Կարապետ էֆ. Մալեճանեան.	ՊՐՈՒՍԱ. — Օննիկ էֆ. Լուսինեան.
ԻԶՄԻՏ. — Արարչամ էֆ. Կուսճեան.	ՌՈՏՈՍԹՈ. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.	ՍԱՄՍՈՐ. — Կարապետ էֆ. Սէֆերեան.
ԽԱՐԲԵՐԴ. — Խոսրով էֆ. Քէչիլեան.	ՍԸՎԱԶ. — Յ. էֆ. Գարակէօզեան.
	ՏՐԱՊԶՈՐ. — Սահակ էֆ. Էթմէքճեան.

ԳՐԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ

Գիրք գնելի կ'ուզե՞ք, դիմեցե՛ք Զարդարեան Գրաստանը. հոն միշտ պիտի գտնե՛ք ամեն ուզածնիդ եւ սիշտ գեղյով :

Հանրապետական կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Լանկա, Խաչիկ էֆ. Ֆէսճեան Դեղարանը,
 Մամաթիա, Կարապետ էֆ. Բարսեղեան Դեղարանը,
 Մագրի-Գիւղ, Պօղոս էֆ. Աղնաւորեանի խանութը,
 Գաւր-Գիւղ, Լեւոն էֆ. Զաւաքճեան Դեղարանը,
 Սիւլտան փոխօֆճեան էֆ. խանութը,
 Բերա, Մեծ փողոց Պ. Գաւնիկ Կիւլէրեանի խանութը :